ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1962 Общественные науки

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС

Հանդեսի 2-րդ համարում հրապարակված են Վ. Ի. Լենինի մի շարք նոր փաստաթղթեր, որոնք վերաբերվում են 1918 թ. մարտ-հոկտեմբերին՝ Սովետական պետության կյանքի դժվարին ժամանակաշրջաններից մեկին: Հրապարակված նոր փաստաթղթերում արտացոլված են ազգային արդյունաբերության կառավարումը կազմակերպելու ասպարեզում Սովետական իշխանության կատարած առաջին քայլերը, Կոմունիստական պարտիայի պայքարը հանուն խաղաղության, Սովետական պետությունն ամրապնդելու և բոլոր ուժերը օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի ու սպիտակգվարդիականների դեմ մոբիլիզացնելու խնդիրները:

Հրապարակված փաստաթղթերը մտցված են Վ. Ի. Լենինի Երկերի լիակատար ժողովածուի մեջ:

«Պարտիայի պատմության գիտա-հետազոտական աշխատանքների խնդիրները ՍՄԿՊ XXII համագումարի որոշումների լույսով»—այսպես վերնագրված Պ. Ն. Պոսպելովի հոդվածը, որը հանդիսանում է Բուհերի հասարակագիտական ամբիոնների վարիչների համամիութենական խորհրդակցությունում 1962 թ. փետրվարի 1-ին և Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ֆիլիալների ու պարտարխիվների ղեկավար աշխատողների խորհրդակցությունում 1962 թ. փետրվարի 19-ին նրա տված զեկուցումների համառոտ սղագրությունը:

Հոդվածում նշված է պարտիայի պատմության ուսումնասիրության գիտա-հետազոտական աշխատանքների աշխուժացումը, որն սկսել է ՍՄԿՊ XX համագումարի որոշումների շնորհիվ, համագումար, որը պետք է համարել պարտիայի պատմության իրոք ստեղծագործական, խորապես գիտական մշակման ուղղությամբ, պատմաբանների շրջադարձի սկիզբը:

Հոդվածագիրը հանգամանորեն անդրադարձել է Ի. Վ. Ստալինի տեսական ու գործնական մի շարք լուրջ սխալներին:

—Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի աշխատություններով, ՍՄԿՊ XXII համագումարի որոշումներով, պարտիայի Ծրագրով, համագումարում Ն. Ս. Խրուշչովի տված զեկուցումներով,—ասված է հոդվածում,—հասարակական գիտությունների աշխատողները պետք է սովետական պատմական գիտությունը վերջնականապես մաքրեն անհատի պաշտամունքի վնասակար հետևանքներից, գիտական խոր փաստարկումներով բնաղատնեն Ստալինի աշխատությունների սխալ դրույթները:

Այնուհետև խոսվում է պարտիայի Կենտկոմի որոշմամբ ստեղծվող «ՍՄԿՊ պատմություն» բազմահատորյակի նախապատրաստության, այդ աշխատությունն ստեղծող հեղինակների կոլեկտիվի անելիքների մասին:

«Պրավդա» թերթի հիսնամյակի առթիվ հրապարակված է Վ. Պ. Ստեպանովի «Լենինյան պարտիայի մարտական գենքը» հոդվածը:

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում գյուղի հասարակական հարաբերությունների զարգացմանը նվիրված հոդվածում Վ. Պ. Նֆիմովը բնորոշում է այն հարցը, թե ինչպես պետք է լուծվի գյուղատնտեսության բնագավառում ՍՄԿՊ նոր Ծրագրով առաջ քաշված հիմնական հարցերից մեկը, այն է՝ ապահովել սովետական գյուղի աստիճանական անցումը կոմունիստական հասարակական հարաբերություններին և հիմնականում վերացնել քաղաքի և գյուղի տարբերությունները:

Ա. Ե. Կովալը և Ս. Վ. Սոսեդովը «Պարտիական ընդհատակը և պարտիական մամուլը բրջնամու թիկունքում (1941—1944)» հոդվածում փորձել են արխիվային աղբյուրների, մասնակիցների հուշերի և այլ նյութերի հիման վրա ցույց տալ, թե 1941—1944 թթ. ՍՍՌՄ-ի ժամանակավորապես օկուպացված տերիտորիաներում, բրջնամու թիկունքում ո՞րն է եղել պարտիական ընդհատակի և պարտիզանական մամուլի ղեկավարումը կազմակերպելու ասպարեզում Կոմունիստական պարտիայի աշխատանքի գլխավոր ուղղությունը:

Մամուլում հրապարակված նյութերի, արխի-

վային փաստաթղթերի և այլ աղբյուրների հիման վրա, հոդվածագիրը հաստատել է, որ 1941—1942 թթ. ձմռանը մեր երկրի ժամանակավորապես օկուպացված տերիտորիաներում հրատարակվում էր ավելի քան 20 ընդհատակյա թերթ:

Պ. Ի. Ուսյակովի հոդվածում լուսաբանված է Սևաստոպոլի պաշտպանության օրերին (1941 թ. հոկտեմբեր—1942 թ. հուլիս) Քաղաքի պարտիական կազմակերպության գործունեությունը:

—Սևաստոպոլի պարտիական կազմակերպությունը,—ասված է հոդվածում,—մեծ դեր խաղաց Քաղաքի պաշտպանության գործում: Կադրերի հիշտ տեղաբաշխումը, նրանց հմուտ դաստիարակությունը, ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի լավ դրվածքը, բնակչության ոգեշնչական ուսուցումը՝ այս ամենը մեծապես օգնեց պարտիային ուժեղացնելու իր ազդեցությունը Քաղաքի բոլոր աշխատավորների վրա, առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու մեր սոցիալիստական հասարակարգի հրամայական հնարավորությունները:

«Լիտվայի ու Բելոռուսիայի Կոմպարտիայի ազգարարային Քաղաքականության հարցի շուրջը» հոդվածում Ս. Ն. Շկլյարը փաստական նյութերի հիման վրա փորձել է տալ գյուղի սոցիալիստական վերափոխումների բնագավառում Լիտվայի ու Բելոռուսիայի կոմունիստների 1919 թ. գործունեության առավել լրիվ պատկերը:

Հրապարակված են նաև Ի. Ա. Պուտյակինի «Պրավդան և ապահովագրական կամպանիան 1912—1914 թթ.» և Ֆ. Ի. Ֆիրսովի «Զնխոպովակյան կոմունիստների աշխատանքը զինվորների մեջ 1930—33 թթ.» հոդվածները:

Հանդեսի այս համարում առաջին անգամ ռուսերեն տպագրված է Ֆ. Էնգելսի մի անհայտ նամակը գերմանական բուրժուական նշանավոր տնտեսագետ Վ. Զոմբարտին: Նամակը զգալի հետաքրքրություն է ներկայացնում Կ. Մարքսի «Կապիտալի» 3-րդ հատորի ուսումնասիրության, մասնավորապես շահույթի միջին նորմայի գոյացման և ապրանքի արժեքը արտադրության գնի վերածվելու հարցի ուսումնասիրության համար:

Կոնսուլտացիաներ բաժնում հրապարակված է Ա. Ի. Մայիչի «Կապիտալիզմի ընդհանուր երգնաժամի արդի փուլը» հոդվածը, որտեղ քննության են առնված հետևյալ հարցերը. Իմպերիալիզմի գաղութային սիստեմի քայքայումը, Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը և կապիտալիստական էկոնոմիկայի հակասությունների սրումը, Բուրժուական գաղափարախոսության ճգնաժամը, Սոցիալիզմի գերազանցությունը երկու հակադիր սիստեմների խաղաղ մրցության մեջ:

Պատմագիտություն և աղբյուրագիտություն բաժնում զետեղված է «Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ բոլշևիկների հակապատերազմական գործողության պատմությունից» հոդվածը, որը լրացնում է 1961 թ. հանդեսի 4-րդ համարում տպագրված «Վ. Ի. Լենինին գրված նամակների տեսությունն» հոդվածին:

Հանդեսի այս համարում հրապարակված են նաև «Թուրքմենստանի Կոմունիստական պարտիայի պատմության ակնարկների» մասին գրախոսությունն և այլ նյութեր:

Вопросы истории

Ամսագրի 4-րդ համարն սկսվում է Վ. Ս. Պոզնանսկու հոդվածով, որտեղ արխիվային փաստաթղթերի և ժամանակակիցների հուշերի հիման վրա լուսաբանվում է Վ. Ի. Լենինի բազմակողմանի գործունեության կարևոր բնագավառներից մեկը՝ նրա դերը սովետական գյուտարարության զարգացման գործում: Հոդվածում ցույց է տրված մեծ առաջնորդի հսկայական ուշադրությունը աշխատավորական հոծ զանգվածներին ստեղծագործական աշխատանքի մեջ ներգրավելու և գյուտարարների համար բացառիկ հնարավորություններ ապահովելու ուղղությամբ:

Մեր երկրում գյուտարարության ու ռացիոնալիզատորության զարգացման պատմության մեջ նշանակալից ուղենիշ եղավ Վ. Ի. Լենինի ստորագրած ՌՍՖՍՌ ժողկոմխորհի 1919 թ. հունիսի 30-ի դեկրետը, որով գյուտարարությունը հայտարարվում էր պետական գործ, իսկ գյուտը՝ համաժողովրդական սեփականություն: Մի քանի հարյուր գյուտարար ու ռացիոնալիզատոր Վ. Ի. Լենինի օրոք, հարյուր հազարավորներ՝ նախապատերազմյան հնգամյակների տարիներին, միլիոնավորներ՝ մեր օրերին. այսպիսին է նրա դաստիարակած սովետական գյուտարարության զարգացման պատմությունը:

Կապիտալիզմի ընդհանուր հգնաժամի նոր, երրորդ էտապի առանձնահատկությունները քննության են առնված տնտեսագետ Մ. Ս. Դրագիլյովի հոդվածում: Ուղեցույց ունենալով ՍՄԿՊ-ի Մրագիրը, որտեղ տրված է համաշխարհային կապիտալիզմի հգնաժամի և գլխավորապես նոր, երրորդ էտապի բնորոշ գծերի վերլուծությունը, հեղինակը նոր էտապը, որն սկսվում է 50-ական թվականների երկրորդ կեսից, բնութագրում է

հետևյալ որակական փոփոխություններով. ա) սոցիալիստական սիստեմի համաշխարհային դերի աճ և համապատասխանաբար իմպերիալիզմի համաշխարհային դերի անկում. բ) ազգային-ազատագրական շարժման զարգացում, որը բնակոխել է պայքարի մի նոր շրջան՝ հանուն դաղութատիրության լիակատար ոչնչացման. գ) իմպերիալիզմի ներքին հակասությունների խորացումը գլխավոր կապիտալիստական երկրներում: Երբ կապիտալիզմի ընդհանուր հզնաժամի սկիզբը դրեցին առաջին համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան ռևոլյուցիան, իսկ երկրորդ էտապը՝ ծավալվեց երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, ապա ի տարբերություն նախորդների, նոր, երրորդ էտապի առաջացումը կապված չէ համաշխարհային պատերազմի հետ: Այն կապված է համաշխարհային զարգացման ասպարեզում սոցիալիզմի վճռական ֆակտոր դառնալու և գաղութային սիստեմի փլուզման հետ:

«9-րդ դարից մինչև 13-րդ դարի կեսերի ռուսաց պատմության ընդհանուր երևույթների տեսություն» վերնագրով տպագրված է ակադեմիկոս Բ. Ա. Ռիբակովի հոդվածը, որը հանդիսանում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության ինստիտուտի կողմից ներկայումս ստեղծվող «ՍՍՌՄ-ի պատմության» առաջին հատորի մի բաժինը:

Սույն հոդվածի հրապարակումով ընթերցողների լայն զանգվածների ծանոթացմանն է ներկայացվում Կիևյան Ռուսիայի պատմության պերիոդիզացիայի հարցը:

«Հոդվածում շարադրվող տեսակետը և հետևությունները,—ասված է հոդվածի խմբագրական մասում,—որոշ դեպքերում չեն համընկնում մեր գրականության մեջ հիմնավորված տեսակետներին, ուստի հեղինակը չափազանց շնորհապարտ կլինեն այն ընթերցողներին, որոնք հնարավոր կհամարեին ծանոթատական դիտողություններ կատարել հիշյալ հոդվածի առթիվ, նկատի ունենալով, որ «ՍՍՌՄ պատմություն» գիրքը նախատեսվում է սովետական ընթերցողների լայն խավերի համար:

Յա. Ի. Լինկովի հոդվածում ուսումնասիրված է ռուս մեծ դեմոկրատ-ռևոլյուցիոներ, մատերիալիստ-փիլիսոփա, փայլուն հրապարակախոս Ա. Ի. Գերցենի և նրա հրատարակությունների գաղափարական ազդեցությունը 1860-ական թվականների «Զեմլյա ի վոլյայի», դեկաբրիստների պարտությունից հետո Ռուսաստանում առաջացած ու ձևավորված այդ ամենախոշոր ռևոլյուցիոն կազմակերպությանը անմիջապես նախորդած ռևոլյուցիոն կազմակերպությունների վրա:

ՍՍՌՄ ԳԱ Լատինական Ամերիկայի ինստիտուտի դիրեկտոր Ս. Ա. Միխայլովը իր հոդվածում խոսելով Լատինական Ամերիկայի երկրների պատմության, բաղաքականության, տնտեսության և կուլտուրայի հարցերի ուսումնասիրության բնագավառում ՍՍՌՄ-ում վերջին տարիներս կատարված աշխատանքների որոշ հաջողությունների մասին, միաժամանակ նշում է, որ Լատինական Ամերիկայի հարցերի ուսումնասիրությունը ամբողջությամբ վերցրած դեռևս անբավարար է, առանձնապես այն մեծ խնդիրների լուսով, որոնք սովետական լատինա-ամերիկագետների, ինչպես և սովետական ամբողջ գիտության առաջ դրել են ՍՄԿՊ XXII համագումարի որոշումները:

Ամսագրի այս համարում հրապարակված են նաև Ա. Յա. Ավրեխի «Վենայի գեղակոծությունը և հունիսերեքյան սիստեմի հզնաժամը» հոդվածը և Լ. Ա. Ֆայնեի հոդվածը Հարավ-Արևելյան Աֆրիկայում բանտուների միջնադարյան պետությունների ծագման բուրժուական պատմագրության մասին:

1962 թ. փետրվարի 5—6-ը տեղի է ունեցել ՍՍՌՄ ԳԱ Պատմական գիտությունների բաժանմունքի ընդհանուր տարեկան ժողովը, որտեղ քննարկվել են բաժանմունքի հիմնարկների 1961 թ. աշխատանքի արդյունքները: 1961 թ. գիտական գործունեության մասին բաժանմունքի հիմնարկների զեկուցումների նյութերի հիման վրա տպագրված է ընդարձակ հաշվեմատյան:

Գիտական կյանքի խրոնիկա բաժնում հաղորդագրություն է հրապարակված ՍՍՌՄ ԳԱ Պատմության ինստիտուտին առընթեր գործող սոցիալիստական գաղափարների պատմության, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իսպանիայի, Անգլիայի, Իտալիայի պատմություններն ուսումնասիրող խմբերի մինչև 1961 թ. կեսը կատարած աշխատանքի մասին:

Ամսագրի ներքին երրորդ համարը բացվում է «ՍՍՌՄ նկարիչների միության երկրորդ համագումարին ընդառաջ» խորագրի տակ զետեղված նակիրը, բայց արդիական սուր հնչողականությամբ հագեցված մի շարք ելույթներով, որոնց հիմնական լեյտմոտիվն են նոր մարդու գեղագիտական դաստիարակության, հասարակական կյանքում կերպարվեստի ունեցած խոշորագույն դերն ու նշանակությունը:

Յարոսլավլում, Լվովում բնակվող և ստեղծա-

գործող նկարիչները վաղուց արդեն հայտնի են իրենց հայրենի քաղաքի սահմաններից դուրս: Նրանց ստեղծագործական առօրյային են նվիրված Մ. Սոկոլնիկովի («Յարոսլավլի գեղանկարիչները») և Դ. Օստրովսկու («Ստեղծագործական նորոգման ժամանակը») բովանդակալից հոդվածները:

ՍՄԿՊ XXII համագումարի օրերին շարք մը տավ աշխարհում խոշորագույն հիդրոէլեկտրակայանը՝ Վոլգագէսը: Նրա էստակադայի պատին իրենց մեծ արվեստով անմահացան մի խումբ վոլգագրաղցի երիտասարդ նկարիչներ, որոնց մոնումենտալ պանոյին՝ «Էներգետիկա», ինչպես նաև նրանց ստեղծագործությանն ընդհանրապես հետաքրքիր հոդված է նվիրել Ա. Գուդսկովան:

Ամսագրի հոդվածների շարքում հատուկ ուշադրության է արժանի Վ. Տոլստոյի ելույթը «Նկարիչը և քաղաքը» խորագրով, որտեղ հեղինակը շարադրել է իր տպավորությունները Հայաստան և Վրաստան կատարած նանապարհորդությունից և ընթերցողին հաղորդակից է դարձնում այդ երկու ռեսպուբլիկաներում արվեստի սինթեզի հետ կապված իր տպավորություններին: Վ. Տոլստոյը գտնում է, որ մի քանի տասնամյակ առաջ շատ ավելի էին ստեղծվում հարտարապետության և քանդակագործության միասնականության հիման վրա ստեղծված շենքեր, իսկ այժմ բոլորովին բացակայում է այդ ելակետը, որի համար հիմք է հանդիսանում այդ սինթեզի ժխտման սկզբունքը: Հիշատակելով գոյություն ունեցող օրինակները, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ դրանք ունեն միայն պատմական սյուժե և հնչողականություն, իսկ ժամանակակից թեմատիկան դեռևս չի գտել իր պատշաճ տեղը:

«Քննարկում ենք համամիութենական ցուցահանդեսը» խորագրի տակ Յու. Խոլմինսկին խոսում է ցուցադրված գրաֆիկական արվեստի նմուշների մասին, որոնց մեջ արտացոլվել է այն բացասական տենդենցը, երբ գրքի նկարազարդումը սահմանափակվում է արտաքին ձևավորմամբ: Հեղինակը տարակուսանքով է մոտենում այն փաստին, որ ցուցահանդեսում չկան երիտասարդ նկարազարդողների ստեղծագործությունները, որ աշխատանքների մեծ մասը կատարված են նյութական գրաֆիկայի տեխնիկայով (հաստոցային գրաֆիկայի ազդեցության հետևանք է) և հանգում է այն եզրակացության, որ մեր գրքային գրաֆիկան կորցրել է այժմեականության զգացումը, իսկ դրա հետևանքով նաև՝ հերոսին:

Ամսագրի էջերում գեղագիտական դաստիարակության հարցերով հանդես է եկել անվանի պլակատագիր Վ. Իվանովը: Ա. Տիխոմիրովի հոդվածը նվիրված է Հունգարիայի երիտասարդ նկարիչների ցուցահանդեսին, որը արտացոլում է այն դժվարությունն ու որոնումները, հաջողություններն ու պրոբլեմները, որոնք այնքան բնորոշ են ժամանակակից հունգարական արվեստին ամբողջապես:

Գեղարվեստական ապակու ցուցահանդեսից բխող ուշագրավ հոդվածով հանդես է եկել Մ. Իլյինը, իսկ արվեստն ուսումնասիրող ընթերցողները այս համարի էջերում կարող են գտնել Մ. Լիբմանի ընդարձակ ելույթը «17—18-րդ դարերի իտալական գեղանկարի մասին», ինչպես նաև հակիրճ տեղեկություններ՝ աշխարհի զանազան երկրների կերպարվեստի կյանքում տեղի ունեցած հետաքրքիր երևույթների վերաբերյալ:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ